ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2021-2023թթ. ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր իրականացված փոխանցումների վերաբերյալ (հունվար-մայիս)





2023թ. հունվար-մայիսին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացվել է 968.7 մլրդ դրամ, ինչը 366.0 մլրդ դրամով կամ 60.7%-ով ավել է 2022թ. և 576.6 մլրդ դրամով կամ 147%-ով ավել է 2021թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-ապրիլի ցուցանիշից ավել է 168.3 մլրդ դրամով կամ 21.0%-ով: 2023թ. հունվար-մայիսին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց կողմից արտերկիր է փոխանցվել 668.6 մլրդ դրամ, ինչը 360.1 մլրդ դրամով կամ 116.7 %-ով ավել է 2022թ. և 424.1 մլրդ դրամով կամ 173.5 %-ով ավել է 2021թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-ապրիլի ցուցանիշից ավել է 149.9 մլրդ դրամով կամ 28.9%-ով: 2023թ. հունվար-մայիսին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և արտերկիր փոխանցված դրամական միջոցների զուտ ներհոսքը կազմել է 300.2 մլրդ դրամ, ինչը 5.9 մլրդ դրամով կամ 2 %-ով ավել է 2022թ. և 152.6 մլրդ դրամով կամ 103.4%-ով ավել է 2021թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-ապրիլի ցուցանիշից ավել է 18.5 մլրդ դրամով կամ 6.6%-ով:

2023թ. հունվար-մայիսին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացվել է 2 մլրդ 480.5 մլն դոլար, ինչը 1 մլրդ 208.3 մլն դոլարով կամ 95.0%-ով ավել է 2022թ. և 1 մլրդ 732.1 մլն դոլարով կամ 231.4 % -ով ավել է 2021թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-ապրիլի ցուցանիշից ավել է 435.4 մլն դոլարով կամ 21.3%-ով: 2023թ. հունվար-մայիսին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց կողմից արտերկիր է փոխանցվել 1 մլրդ 713.2 մլն դոլար, ինչը 1 մլրդ 66.9 մլն դոլարով կամ 165.1%-ով ավել է 2022թ. և 1 մլրդ 246.3 մլն դոլարով կամ 266.9%-ով ավել է 2021թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-ապրիլի ցուցանիշից ավել է 387.9 մլն դոլարով կամ 29.3%-ով: 2023թ. հունվար-մայիսին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և արտերկիր փոխանցված դրամական միջոցների զուտ ներհոսքը կազմել է 767.3 մլն դոլար, ինչը 141.3 մլն դոլարով կամ 22.6 %-ով ավել է 2022թ. և 485.8 մլն դոլարով կամ 172.6 %-ով ավել է 2021թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-ապրիլի ցուցանիշից ավել է 47.6 մլն դոլարով կամ 6.6%-ով:

*** Տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի ինտերնետային կայքի արտաքին հատվածի վիճակագրության հրապարակումները՝ ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր իրականացված փոխանցումների վերաբերյալ**